ՄԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՒՇԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԵՊ ԳԱՆԱՊԱՐՀՆ ԸՍՏ Վ. ՓԱՓԱԶՅԱՆԻ «ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ» ԳՐՔԻ

Համաշխարհային գրականության պատմության մեջ քիչ չեն մեծ ուշադրության արժանացած հուշեր, ինքնակենսագրություններ՝ գրված, այսպես ասած, «ոչ պրոֆեսիոնալ» գրողների կողմից: Դը Գոլի, Չերչիլի, Շալյապինի, Ստանիսլավսկու, Ժուկովի, Մարչենկոյի ինքնակենսագրությունների ժողովրդայնությունը պայմանավորված է նախ և առաջ հեղինակների՝ նշանավոր անձ լինելու հանգամանքով: Հայտնի քաղաքագետների, արվեստագետների, զորավարների, իրավաբանների անձի և գործունեության ամենահավաստի աղբյուրը՝ ինքնակենսագրությունը, հագեցնում է ընթերցողի ծարավը՝ մեծ մարդկանց ճանաչելու, հասկանալու, նրանց հաղորդակից լինելու, նրանցից սովորելու բուռն ցանկությունը:

Պետք է նկատել, որ հետաքրքրությունը ինքնակենսագրական նման պատումների նկատմամբ, նրանց արժևորումը պայմանավորված են ոչ միայն պատմող անհատի նշանակալիությամբ. հետաքրքրության աստիճանը կախված է նաև այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ գրքի գեղարվեստական արժանիքները, իրադարձությունների հեղինակային գնահատականը, ինքնաճանաչման ձգտումը, ինքնակերտման վարպետությունը... Մի բան է գեղարվեստական ինքնակենսագրությունը՝[1] գեղարվեստական միջոցների առատությամբ և շեշտվածությամբ, մի այլ բան՝ հուշագրային-ինքնակենսագրական արձակը՝ տեղեկատվական, փաստագրական արժեքների առաջնայնությամբ: Բայց չնկատել վերջինիս գեղարվեստական ներուժը և չենթարկել այն գրականագիտական վերլուծության՝ անհիմն է և հանցավոր, հատկապես այնպիսի մի երևույթի վերաբերմամբ, ինչպիսին է մեծանուն դերասան Վահրամ Փափազյանի «Հետադարձ հայացք» հուշերի գիրքը:

Երկհատոր այս գիրքը (առաջին հատորը լույս է տեսել 1956թ., երկրորդը՝ 1958թ.) սեփական հետաքրքիր ու բեղուն կյանքին ուղղված հեղինակի շիտակ հայացքն է, ինքնահիացումից և ցուցադրական ինքնախարազանումից զերծ միտքը: Այն գերում է արվեստագիտական խոր դիտարկումներով, փիլիսոփայության հասնող աֆորիզմներով, պատկերավոր նկարագրությամբ, քնարական զեղումներով, նուրբ հումորով... Իսկ եթե այս ամենին ավելացնենք

[1] Ռուս գրականագիտությունը ինքնակենսագրական ժանրի այս տարատեսակը անվանում է նաև «писательская»՝ շեշտելով նրա՝ գրողի կողմից ստեղծված լինելու հանգամանքը:

«Հետադարձ հայացքի» «դասական փայլ ունեցող լեզուն»[2], ապա պարզ կլինի, թե ինչ մեծ աղմուկ բարձրացրեց Փափազյանի կենսագրությունը հատկապես գրական շրջանակներում: Մամուլը հայտարարեց, որ «Գիրքը գրուած է իսկական գրողի հմուտ գրչով և աչքի է ընկնում ... գեղարուեստական բարձր մակարդակով»[3]:

Նման հավաստիացումները մոտեցնում են Փափազյանի երկը գեղարվեստական ինքնակենսագրությանը, որի «ապացույցները» գրքից արժանին են ուշադրության և քննարկման: Բայց միևչ այդ՝ ինքնակենսագրություն-գեղարվեստական ինքնակենսագրություն-գեղարվեստական գրականություն փոխհարաբերության մասին, դրանց շուրջ -գրականագիտական տարակարծությունների մասին:

Ինքնակենսագրությունը վավերաթուղթ է: 18-19դդ. արևմտյան գրականագետներին այս ժանրը հետաքրքրել է այնքանով, որքանով որ տվել է լրացուցիչ տեղեկություն այս կամ այն հեղինակի ստեղծագործությունն ուսումնասիրելիս: Օրագրերը, հուշերը այն կարևոր տեքստերն են, որոնցով կարելի է գտնել ստեղծագործության բանալին: Միայն <u>փաստաթղթի կարգավիճակը</u> դուրս է մղել ինքնակենսագրությունը գեղարվեստական գրականության սահմաններից: Ֆրանսիացի քննադատներ Ա. Ֆրանսը և Ֆ. Բրյունետիերը առանձնացնում են ինքնակենսագրությունը գրականությունից, արվեստից: Բրյունետիերը թվարկում է այս ժանրի «մեղքերը»: «Ինքնակենսագրությունը թեթև է (իսկական արվեստը պահանջում է աշխատանք և հղկում) և ոչ պիտանի (արվեստը ենթադրում է անհատականի հաղթահարում և համընդհանուրի ձեռքբերում)»[4]:

Ինքնակենսագրությունը չի սպանում արվեստը և ստեղծագործությունը, և իրավացի է ժամանակակից քննադատ, ժանրի տեսաբան Ֆ. Լեժյոնը, որ «գոյություն ունի ինքնակենսագրական ժանր՝ յուրահատուկ արվեստով»[5]:

Ինչպես յուրաքանչյուր ժանր արվեստում, որն ունի իր կանոնները, կառուցվածքը, ինքնակենսագրական տեքստերը նույնպես ենթակա են որոշ կանոնների՝ հաստատելով ինքնուրույն ժանր կոչվելու իրավունքը: Եվ կառուցվածքային այդ հիմնակետերից է փաստագրական ու գեղարվեստական հիմքերի համաժամանակյա գոյությունը երկում:

---

[2] Սուրադյան Ն., Փափազյանի Օթելլոն իր իսկ պատկերացմամբ // Շեքսպիրական, հ.4, Եր., 1974, էջ 72:
[3] Մնացականյան Ն., Մեծատաղանդ դերասան Վ. Փափազյանի յուշագրութիւնները, // Զարթոնք, Բեյրութ, թիվ 13, էջ 2:
[4] Տես՝ Лежен Ф., Сопротивление жанру // Иностранная литература, 2000, N 4, с. 113.
[5] Лежен Ф., Построение жанра //Иностранная литература, 2000, N 4.с. 113.

Ռուս տեսաբան Ն. Լեյդերմանը մի հոդվածում ցույց է տալիս զուտ փաստագրական, հուշագրային նյութի գեղարվեստական վերափոխման հնարավորությունները, և թե ինչ պայմաններում են այդ հնարավորությունները իրագործվում[6]: Օրինակ՝ գեղարվեստականացման գործընթացում մեծ դերը պատկանում է միջնորդավորված գեղագիտական ապրումին՝ ի դեմս հեղինակի անհատական վերաբերմունքի, որ կարող է դրսևորվել ցանկացած փաստի, իրադարձության նկատմամբ: Փաստը դառնում է զգայականորեն բովանդակալից, իսկ սա նշանակում է, որ այն կարող է վերափոխվել գեղարվեստական պատկերի:

Այսպես, ինքնակենսագրության մեջ փաստագրությունը, իրադարձության հավաստիությունը դառնում են աքսիոմատիկորեն կարևոր, բայց գեղարվեստական ներուժը և դրա իրացումը ժանրին տալիս են նաև արվեստի, գեղարվեստական գրականության կարգավիճակ:

Կենսագրական նյութի անհագ գեղարվեստական կլանումը տեսնում ենք ինքնակենսագրության տարատեսակներից ինքնակենսագրական վեպի ժանրում, որը մեծ զարգացում ապրեց 19- 20-րդ դարերում: Տոլստոյի, Գորկու, Գլադկովի, Պաուստովսկու հայտնի երկերը սովորական գեղարվեստական ստեղծագործություններ են՝ վառ արտահայտված ինքնակենսագրական բնույթով: Դրանցում տրամաբանական-ճանաչողական և գեղագիտական նժարների միջև տատանումը և ծանրության կենտրոնի տեղափոխումը դեպի գեղագիտականը որոշում են ժանրային տարատեսակը՝ այն է՝ գեղարվեստական ինքնակենսագրություն կամ ինքնակենսագրական վեպ: Նույն կերպ կարող ենք բնորոշել Վ. Փափազյանի «Հետադարձ հայացքը»՝ ուշադրությունը առանձնակի հրավիրելով տիպականացման, կերպարակերտման, սյուժետի զարգացման, պատկերավորման միջոցների, երկխոսությունների և մանրամասների ստեղծման վրա:

«Հետադարձ հայացքը», ընդհանուր ձևակերպմամբ, փափազյանական կյանքն է արվեստում և արվեստից դուրս: Գիրքն ընթերցելիս զգում ես, որ նման բաժանումը երբեմն դառնում է անհեթեթ, որ դժվար է պատկերացնել Փափազյանին արվեստից դուրս: Ուստի «Հետադարձը» մեծ մասով արվեստի մարդու ընդհանրացված պատմություն է:

Փափազյանը պատմում է իր «տարօրինակ, այլազան ու անհանգիստ» կյանքը վաղ մանկությունից սկսած, պատմում է ծննդավայրի կենցաղի, իր բազում արկածների, սիրավեպերի, շրջագայությունների մասին: «Հետադարձ հայացքը» անձնական կյանքի խոստովանանք է, հեղինակը իր «չարաճճիու-

---

[6] Տես՝ Лейдерман Н., К вопросу о художественном потенциале документального произведения // О художественно-документальной литературе, Иваново, 1972.

թյունների» համար անկեղծորեն հայցում է ընթերցողի ներողամտությունը. «Այս աշխատանքը ձեռնարկելիս ես ինձ խոստացել եմ ամեն գնով անկեղծ լինել դեպի քեզ, իմ ընթերցող, և այս գիրքը մի կյանքի, իմ կյանքի պատմությունը լինելուց բացի մի խոստովանանք է, այդպես էլ ընդունիր և ներող եղիր»[7]:

Փափազյանի գիրքը հուշագրություն է՝ ոչ ավանդական ընկալմամբ. շրջանցված է ժամանակագրական խիստ հաջորդականությունը, գրեթե բացակայում են տարեթվերը, ամսաթվերը: «Հետադարձը» աչքի է ընկնում նաև արվեստագիտական ծանրակշիռ հայացքներով ու խորհրդածություններով: Այսպես, Փափազյանի հուշերը անգնահատելի նյութ են պարունակում հայ, ռուս, արևմտաեվրոպական թատերական գործիչների արվեստը հասկանալու համար: Հիացմունքի արժանի են նրա բնութագրումները՝ տրված Սիրանույշին, Մնակյանին, Աբելյանին, Զարիֆյանին, Արմենյանին, Սևումյանին, Հասմիկին, Ա. Ոսկանյանին, Հր. Ներսիսյանին, Ա. Ավետիսյանին, Ց. Ամերիկյանին, Յուրևին, Նադեժդինին, Դրանկովին, Կոմիսարովին, Դուզեին, Բեռնարին, Ռոսսիին, Կալաբրեզիին, Գոցցիին, Սալվինիին, Նովելլիին, Ցակկոնիին...

Փափազյանը միայն դրվատանքի խոսքեր շռայլելու համար չի գրել այս գիրքը, նա նկատել է նախ իր արվեստակիցների ստեղծագործական թերությունները: Օր.՝ Ավետ Ավետիսյանի արվեստի անհերքելի առավելությունների կողքին թվարկում է թերի կողմերը. «Ափսոս, սակայն, որ ունենալով բազմաթիվ լարեր իր տավիղում, նա իր ստեղծագործությունների մեծամասնությունը երգում է միշտ նույն լարերի վրա, և սա տալիս է նրա կերպարներին միօրինակության, հաճախ և միակողմանիության ցավալի դրոշմը»[8]:

Իր աստանդական կյանքի պատմությունը Փափազյանը հաճախ ընդհատել է Օթելլոյի, Համլետի, Լիր արքայի, Շայլոկի, Ուրիել Ակոստայի, Դոն Ժուանի կերպարների նուրբ վերլուծություններով:

Մեծ դերասանի հուշագրության ներդաշնակ մասն են կազմում նաև դերասանական վարպետության, ընդհանրապես թատրոնի մասին դատողությունները՝ արժանի մտնելու թատրոնի տեսության մեջ: «...Ամեն արվեստ իր արհեստն ունի: Ստեղծագործող արվեստագետ դերասանը պետք է լինի միևնույն ժամանակ իր գործի «վարպետ արհեստավորը»: ... Դերասանի արհեստը իր արտաքինի, այլ խոսքով՝ իր արտահայտության միջոցներին բացարձակ տիրապետելու, նրանց կառավարել կարենալու և նրանց իր ներքին

---

[7] Փափազյան Վ., Հետադարձ հայացք, հ.1, Եր., 1956, էջ 235: Սույն գիրքից մեջբերումների էջը այսուհետ կնշվի շարադրանքում:

[8] Փափազյան Վ., Հետադարձ հայացք, հ.2, Եր., 1958, էջ 9: Սույն գրքից մեջբերումների էջը նույնպես կնշվի շարադրանքում:

աշխարհին ու ստեղծագործական մտահղացմանը առանց ճիգի ու բնազդորեն ենթարկել կարողանալու մեջ է կայանում» (I, 26-27):

Ինքնակենսագրություն-խոստովանություն, հուշագրություն, թատերագիտական աշխատություն, գրական վերլուծություն. այս որակումների կողքին ավելանում է ևս մեկը, որով էլ հիմնականում պայմանավորված է գրքի մեծ հմայքը. «Հետադարձ հայացքը» գեղարվեստական երկ է, վեպ: Մերկ փաստագրությունը՝ իրական դեպքերի, դեմքերի, աշխարհագրական անունների թվարկումն ու նկարագրությունը, Փափազյանի գրչի տակ դարձել է միջոց՝ ստեղծելու գեղարվեստական պատկեր: Եվ գեղարվեստականացման ընթացքը Փափազյանը սկսել է իրական փաստերի ընտրությունից, համակարգումից և գեղարվեստական ընդհանրացումից[9]:

Սովորաբար գրողները ընդհանրացնում են իրականության ամենաէական կողմերը տիպական կերպարների միջոցով: «Հետադարձի» հեղինակը ստեղծել է բազմաթիվ անհատականացված բնավորություններ, որոնց մեջ մարմնավորված են որոշ տեսակի մարդկանց ընդհանուր գծեր: Հիշենք իրեն Բագրատունյաց ցեղի վերջին շառավիղ ներկայացնող Սվաճյանին, «աշխարհում բնակվող, սակայն ոչ աշխարհից» ուսուցիչ Կասկանդիլյանին, ամուսիններ դժբախտ Եվգինեին և թղթախաղի սեղանների «հերոս» Նշանյան էֆենդիին, Ռիգայի թատրոնի դիրեկտոր «վաճառական» Գրիշինին:

Հեղինակի նուրբ ու դիպուկ խոսքի շնորհիվ կենդանի կերպարներ են դարձել հայրը, պապը, հորաքույրը, Բրաբիոն տուտուն, Սարուխանը, Սարգիս էֆենդին, Աղավնի հանումը, Մարին, Ենովքը, Վրույրը: Ընթերցողը շոշափում է, տեսնում նույնիսկ այն մարդկանց, որոնց էությունը հեղինակը բնութագրել է շատ սեղմ, ընդամենը երկու-երեք նախադասությամբ: Օր.՝ «Խարկովում իմ կուպեն մտավ մի փարթամ, փառահեղ, շիկահեր երիտասարդ կին: Զանձրույթը, որ տիրել էր ինձ, իսկույն փարատվեց, որովհետև անմիջապես մտերմացավ ինձ հետ և նույնպես Պետերբուրգ էր գնում: Կինը Խարկովի հայտնի շաքարագործ, միլիոնատեր Բրոդսկու աղջիկն էր, այրիացած կամ ամուսնաթող, ինչպես ուզում ես, ընթերցող, և հավատացնում եմ, իր խոսակցությամբ ու առինքնող

---

[9] Հուշագրային-ինքնակենսագրական արձակում գեղարվեստական ընդհանրացումից բացի տարածված ձև է եղելության փիլիսոփայական ընդհանրացումը՝ հեղինակային խոհը (սրա լավագույն բանաձևը Ա. Գերցենի հայտնի ինքնակենսագրության վերնագիրն է): Փափազյանի ինքնակենսագրությունը լի է փիլիսոփայական աֆորիզմների հասնող նման խոհերով.« Չկա հայրենիք, որ չունենա իր արվեստը, ուրեմն և չկա արվեստ, որ չունենա իր հայրենիքը» (I, 26), «Գիտությունը միշտ փոփոխվող, միշտ հարատևող, միշտ հառաջադիմող մի կետ է, որին ձգտում է կամ որի հետևից վազում է մարդկային միտքը» (I. 22):

շնորհներով ոչ նվազ քաղցր, քան իր պատկառելի հոր արտադրած շաքարը» (I, 376):

Սինչ ինքնակենսագրական-հուշագրային արձակում հեղինակը հանդես է գալիս որպես «արվեստագետ՝ իր կյանքի բնական և անխառն կապերի հանգույցում»[10], գեղարվեստական ինքնակենսագրությունում հեղինակի անձը ձեռք է բերում գեղարվեստական կերպարի գծեր, կենդանի կանգնում ընթերցողի առաջ, թափանցում նրա հոգին: Փափազյան-հերոսը խորհրդավոր է, առինքնող, սրամիտ, միշտ լավատես, շռայլ՝ զգացմունքների դրսևորման մեջ, անհանգիստ, պրպտող, կյանքի փոթորիկներին ընդառաջ գնացող...Երկրորդ հատորում տեղ գտած ինքնադիմանկարը ամենահամարձակ ու ամենաանկեղծ ինքնաբնութագրերից մեկն է հայ գրականության մեջ: Փափազյանը ինքն իրեն նայում է արարողի աչքերով, ճշտում իր ներքին և արտաքին առանձնահատկությունները. «... Իմ արտաքին մարդը, լինելով հարազատ կեղևը պարունակության, եղել է և կա նույնպես մի սինթեզ, ինչպես ներքինը: ...Հնուց, շատ հնուց մնացել են անխախտ, անփոփոխ, անսասան, մուգ կամար, գրեթե իրար կպած հոնքերի տակից շատ հեռուներից նայող և առասպելական հին ժամանակներից խոսող երկու խոշոր աչքեր, որոնց մեջտեղից իջնող քիթը տաշել է մի քիչ Հելլադան, Բյուզանդիոնը մի քիչ նրբացրել, իսկ Արևմուտքը բարեհաճել է զգայուն և շարժուն ռունգերով նրան իմաստավորել» (II, 259-260): Այս տողերը կարդալիս ևս մեկ անգամ համոզվում ես, որ «Դիմանկարային արվեստը միշտ մեծ նշանակություն է ունեցել հուշագրային-ինքնակենսագրական գրականության զարգացման մեջ՝ հանդիսանալով հասանելի վարպետության ամենահավաստի ցուցիչներից մեկը»[11]:

Շատ դիմանկարներ կան Փափազյանի սրտի պատկերասրահում՝ որպես լակոնիկ և արտահայտիչ գրելաոճի դրսևորումներ: Սուր դիտողականությունը, մարդու արտաքին և ներքին տվյալներից վարպետորեն օգտվելու կարողությունը հատկապես զգացվում է Աբդուլ Համիդի դիմանկարում:

«Հետադարձ հայացքը», ինչպես յուրաքանչյուր հուշագրություն, կառուցված է սյուժետային մեկ ամբողջություն չկազմող դեպքերից, դեպքեր՝ «ծիծաղելի կամ վտանգավոր, հաճախ համեմված մահվան տագնապով, հաճախ էլ զվարթ, անզուսպ ծիծաղով» (II, 451): Փափազյանի վարպետ գրչի շնորհիվ այդ դրվագները զրկվում են սոսկ վերհուշեր կոչվելու իրավունքից: Մի շարք գլուխներ պատկերում են, ինչպես նովելը, մարդկային կյանքի մեկ՝ բավականին ավարտուն դրվագ, ունեն գործողության արագ զարգացում,

---

[10] Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, հ.1, Եր., 1967, էջ 318:

[11] Елизаветова Г., Становление жанров автобиографий и мемуаров // Русский западноевропейский классицизм, М., 1982, с. 262.

անսպասելի վախճան: Հիշենք, օրինակ, բաղնիքի տեսարանը, ելակների պատմությունը, Եվգինեի սիրո պատմությունը, կվասի և մկների հետ կապված տեսարանը: «Հետադարձը» ունի ինքնակենսագրական վեպի կառուցվածք. այն ասես նովելների շարք է:

Փափազյանի կենսագրականում հուշի գեղարվեստականացման ընթացքը շարունակում են երկխոսությունները՝ որպես գեղարվեստական երկում բնավորության հոգեբանական բացահայտման կարևոր միջոցներ: Սովորաբար հուշագրություններում երբեմն-երբեմն հանդիպող երկխոսությունները չպետք է ընկալել որպես ճշգրիտ փաստեր. ոչ ոք տարիներ, տասնամյակներ անց չի կարող բառացիորեն հիշել և վերարտադրել խոսակցությունը: Փափազյանը հիշողության այս «թերությունը» շտկել է իր ստեղծագործ և ճկուն մտքով: Որպես հետևանք՝ ընթերցողը չի էլ կասկածում, որ երկխոսությունները հորինված են:

Մանրամասների վերհիշումն ու ստեղծումը ևս օգնել են Փափազյանին առավել ամբողջացնել գեղարվեստական պատկերները, կերպարները: «Տես, ինչ գեղեցիկ է այս փոքրիկ «մեյդանը», ուր հին գորգի կտորի վրա պպզած՝ խոկում է այս ծերունի դերվիշը. լայնաքղանցք կապան ծածկում է նրա բոբիկ ոտքերը, հավաքել է նա ջղուտ ափի մեջ իր բանիմաց մորուքի անվերջանալի երկարությունը և խորհրդածում է, կարծես առջևը դրված զույգ տրեխների հետ՝ առ ի չգոյե հակաճառողի» (II, 406):

Շատ է գրվել և խոսվել «Հետադարձ հայացքի» լեզվի արտակարգ պատկերավորության, պատկերավորման միջոցների առատության մասին, որոնց ուսումնասիրությունը արժանի է առանձին և ծավալուն ուսումնասիրման: Մեր հետազոտության էջերում կբավարարվենք միայն մի քանի օրինակներով: «Սայրի ցուրտ սրություն», «հատակին հանգչող թաշկինակ», «կախաղանի նախահամ սեղմում», «մտքի թավալում», «խղճի թարախակալած խոց», «գիշերը ... հավիտենական սիրահարը արշալույսի». այս և բազում այլ մակդիրների և փոխաբերությունների կողքին գրքի էջերում հանդիպում ենք նաև համեմատությունների, փոխանունությունների: Օր.՝ «Վանդակից դուրս թռած աղվեսի նման վազվզում էի նավի վերնահարկում» (I, 72), «Նայեցի, ինչպես սովալլուկ գազանը անհագուրդ աչքերով լափում է իր որսը՝ նախքան ուտելը» (I, 92):

Ռ. Զարյանը իր «Հուշապատումի» նախաբանում ուրվագծել է հուշի գեղարվեստականացման ճանապարհը. «Սկզբում միայն մտադրվեցի գրառումների հիման վրա նոր շարադրանք ստեղծել: Մի խոսքով՝ եղածը «հագեցնել» հոգեբանական այնպիսի դիտողություններով, որ բերել է իր հետ տարիների

հասունությունը: Բայց հետո հրաժարվեցի այդ մտքից և գրառումը պահպանեցի իր սկզբնական տեսքով»[12]:

Փափազյանի «Հետադարձը» և հագեցած է «հոգեբանական դիտողություններով», գեղարվեստական տարրերով, և գրված է մի շնչով, առանց լրացուցիչ մշակման կամ շտկման: Սրանք Փափազյանի բնատուր գրողական ձիրքի «ապացույցներն» են, ձիրք, որ դրսևորվել է «Հետադարձի» էջերում նաև որպես գեղարվեստական հորինվածք: Հեղինակն ինքը այդ մասին ակնարկում է. «Մարդիկ գտնում են, որ իմ այս տողերում հնարանքներ կան: Եվ իրոք, երբեմն ինձ էլ է թվում, որ իմ կյանքը կազմող դեպքերը հնարանքներ են: Բայց ի՞նչը հնարանք չէ մարդու աշխարհում, մտերիմ ընթերցող... և կյանքը միթե մի հնարանք չէ՞» (II, 284):

Բծախնդիր ուսումնասիրողը Փափազյանի հուշերի գրքում կգտնի սխալներ, դեպքերի ու դեմքերի հետ կապված անճշտություններ: Լ. Ներսիսյանը, Գ. Մահարին իրենց հոդվածներում ակնարկել են որոշ անճշտությունների մասին: Բայց չպետք է մոռանալ, որ նմանատիպ «ստախոսությունը» ունի կարևոր արդարացում. իսկական արվեստագետի համար բուռն երևակայությունը դառնում է իրականության փաստ, չափազանցությունն ու ոգևորությունը ուղեկցում են նրան կյանքի գրեթե բոլոր հանգամանքներում:

«Հետադարձ հայացք» հուշերի գիրքը ցույց տվեց, որ Փափազյանը կարող է տեսնել և իմաստավորել, յուրահատուկ շտրիխով գեղարվեստականացնել կյանքի ամենահասարակ երևույթները:

---

[12] Զարյան Ռ., Հուշապատում, Եր., 1975, էջ 6: